ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԸ

ԳԱԳԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հայաստանում 2018 թ. հեղափոխական զարգացումներին զուգահեռ՝ առաջանում են որոշ հարցադրումներ ստեղծված պայմաններում քաղաքացիական հասարակության (այսուհետ՝ ՔՀ) կառուցվածքային, գործառական դերի և դիսկուրսային փորձառությունների կազմակերպման վերաբերյալ: Մասնավորապես, «թավշյա հեղափոխությանը» հաջորդած տեղաշարժերի շնորհիվ որոշ դերակատարներ ներգրավվեցին կառավարման համակարգ: Միաժամանակ ձևավորվում են քաղաքական նոր կուսակցություններ՝ ՔՀ նախկին դերակատարների ներգրավմամբ: Այս ամենի հետ մեկտեղ՝ որոշ փոփոխությունների է ենթարկվում նաև ՔՀ դիսկուրսը. նոր ձևավորված կառավարության և հանրության փոխհարաբերման հիմքերը նոր որակներ են ձեռք բերում: Այսպես, «թավշյա հեղափոխության» սոցիալ-քաղաքական հետևանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետխորհրդային Հայաստանում կառավարության նկատմամբ հանրային բարձր վստահության պայմաններում ՔՀ քննադատական, խնդրականացնող դիսկուրսի արդիականությունը փոխարինվում է ՔՀ գործակցային, աջակցային դիսկուրսով: Այս պայմաններում ծագում են մտավախություններ առ այն, որ ՔՀ դիսկուրսի էթիկական (անկանխակալություն, այլոց ազդեցությանը չտրվելու ունակություն)[1], կոնվենցիոնալ սկզբունքները վտանգող մանիպուլյատիվ օրակարգերը կարող են սպառել ՔՀ քննադատական ներուժը: Այս դրսևորումները հիմք են եզրակացնելու, որ ՔՀ դիսկուրսը այժմ վերակազմակերպման անցումային փուլում է:

Ուստի մի կողմից կարևորվում է հիշյալ փոխակերպումների շարժընթացն ու համատեքստը վերլուծելու և համարժեք հայեցակետեր մշակելու անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ ՔՀ նորմատիվային դիսկուրսի խթանումը, ինչն իր հերթին ենթադրում է քաղաքացիական դիսկուրսի կազմակերպում ՔՀ նորմատիվային տիպարի շրջանակներում: Այդուհանդերձ, հիշյալ հետազոտական առաջադրանքների իրա-

[1] Տե՛ս **Kohen A., Arato j.,** Civil Society and Political Theory, Cambridge, MIT Press, MA/London, 1992, էջ 462:

կանացումը դժվար է պատկերացնել առանց գաղափարաբանական ընդհանուր շրջանակների հստակեցման: Այլ կերպ ասած՝ ՔՀ նորմատիվ դիսկուրսը կազմակերպելու համար կարևոր է սահմանել, թե որոնք են լինելու դրան բնորոշ հանգուցային կետերը: Նշված խնդիրը լուծելիս կհիմնվենք Մ. Յորգենսենի և Լ. Ֆիլիպի «Դիսկուրս վերլուծությունը որպես տեսություն և մեթոդ» աշխատությունում առաջարկված մոտեցման վրա, որի համաձայն՝ դիսկուրսի հանգուցային կետը արտոնյալ նշան է, որի շուրջ էլ դիրքավորվում են մյուս նշանները: Այս պարագայում դիսկուրսային տարրերը նշանակություն են ստանում ըստ հանգուցային կետի նկատմամբ իրենց ունեցած հարաբերման[2]: Ելնելով այս հայեցակարգից՝ նշենք, որ ՔՀ նորմատիվային դիսկուրսում ժողովրդավարությունը կընդունենք որպես հանգուցային կետ և այդտեղ ներգրավված մյուս գաղափարաբանական տարրերը կտեղորոշենք ժողովրդավարության հիմնարար սկզբունքների համատեքստում:

Այդուհանդերձ, տեսաբաններից ոմանք արդարացիորեն նկատում են, որ ժողովրդավարական համակարգերը ժամանակակից մարտահրավերների պայմաններում (փախստականների ճգնաժամ, ծայրահեղականություն) կարիք ունեն որոշ համալրումների: Դիսկուրսային մակարդակում սա ենթադրում է հարակից այլ դիսկուրսների ներմուծում ժողովրդավարության համատեքստ: Այս շրջանակներում, հիմնվելով արդի ամերիկացի սոցիոլոգ Ի. Վալերստեյնի պատկերացումների վրա, ժողովրդավարական և ազատական սկզբունքների համադրումը կդիտարկենք որպես ՔՀ նորմատիվային մոդելի ձևավորման հիմնական ուղղություն: Վալերստեյնը, քաջատեղյակ լինելով ազատական և ժողովրդավարական կարգերի գաղափարաբանական հակադրումներին, այնուամենայնիվ գտնում է, որ արդի հասարակություններում դրանք կարող են լրացնել մեկը մյուսին: Նա առաջարկում է կիրառել, այսպես ասած, «ազատահավասարության» սկզբունքը որպես ազատական և ժողովրդավարական գաղափարների մեկտեղման կարևոր նախապայման[3]: ՔՀ հայտնի տեսաբաններ Ջ. Կոհենն ու Է. Արատոն իրենց հերթին ևս, զերծ մնալով ազատական և ժողովրդավարական սկզբունքների հակադրումից, գտնում են, որ արդի հասարակություններում ձեռք բերված ազատությունների պահպանումն ու տարածումը պետք է հիմնվեն ժամանակակից ՔՀ ինստիտուտների շարունակական ժողովրդավարացման վրա, ինչը միաժամանակ կնպաստի քաղաքական դաշտի վրա սույն ազատությունների ազդեցության աճին[4]:

---

[2] Տե՛ս **Jorgensen M., Louise J.Phillips,** Discourse Analysis as Theory and Method, SAGE Publications, London, 2002, էջ 26:

[3] Տե՛ս **Wallerstein I.,** Liberalism and Democracy-Freres Ennemis, Fourth Daalder Lecture, Rijksuniversiteit Leiden, Interfacultaire Vakgroep PolitiekeWetenschappen, March 15, 1997, էջ 14:

[4] Տե՛ս **Kohen A., Arato j.,** նշվ. աշխ., էջ 457-458:

Այս ամենի հետ մեկտեղ՝ ՔՀ նորմատիվային մոդելի մշակումներում, շրջանցելով ռեդուկցիոնիստական վերապահումները, կարևորում ենք ՔՀ նորմատիվային տիպարի ապաքաղաքականացումը, ինչը թույլ կտա քաղաքացիական հարաբերությունները տարածել հասարակական կյանքի տարբեր ոլորտների միջև: Այս շրջանակներում հիմնվում ենք արդի ամերիկացի սոցիոլոգ Ջ. Ալեքսանդրի՝ ՔՀ, այսպես ասած, աշխարհիկացման մոտեցումների վրա, որտեղ հեղինակը կարևորում է ՔՀ ապամիֆականացումը, ինչն իր հերթին ենթադրում է ՔՀ դիսկուրսի «ազատագրում» քաղաքական համակարգերի գերադիր ազդեցությունից և ՔՀ հայեցակարգը դիտարկում հասարակական, տնտեսական, մշակութային ոլորտների լայն համատեքստում: ՔՀ դիսկուրսի ընդլայնման վերոնշյալ մոտեցման օգտին են խոսում «թավշյա հեղափոխությանը» հաջորդած զարգացումները: Մասնավորապես կարելի է նկատել, որ հայաստանյան ՔՀ դիսկուրսի բազմազանեցվածության (դիվերսիֆիկացիայի) ցածր մակարդակը և կախյալությունը քաղաքական գործընթացների ազդեցությունից նույնպես առիթ են խոսելու հետհեղափոխական շրջանում ՔՀ դաշտի ապաակտիվացման կամ ապամոբիլիզացման ինչ-ինչ դրսևորումների մասին (նկատի ունենալով ՔՀ որոշ դերակատարների կողմից կուսակցությունների հիմնումը): Այդուհանդերձ, առավել հանգամանալից անդրադառնալով Ջ. Ալեքսանդրի պատկերացումներին՝ առանձնացնենք նրա առաջարկած ՔՀ երկակի դիսկուրսների հայեցակարգը: Ջ. Ալեքսանդրը, համադրելով ֆունկցիոնալիստական և պոստստրուկտուրալիստական մոտեցումները, ՔՀ հիմնական գործառույթն է համարում սոցիալական կազմակերպման ապահովումը ժողովրդավարական սկզբունքների համաձայն, որում ՔՀ-ն հանդես է գալիս նորմատիվային տիպարի դերում: Այնուհետև, հավատարիմ մնալով պոստստրուկտուրալիստական ավանդույթներին, Ջ. Ալեքսանդրը ՔՀ և հասարակական կյանքի փոխհարաբերումը դիտարկում է տեքստային մակարդակում[5]:

Հիշյալ պատկերացումների հիման վրա Ջ. Ալեքսանդրը առաջ է քաշում ՔՀ դիսկուրսի աշխարհիկացման գաղափարը, ինչը ենթադրում է ՔՀ նորմատիվային տիպարի իմաստավորում քաղաքական դիսկուրսի գերիշխող ազդեցությունից անդին: Այս գործընթացում հեղինակը, առանձնացնելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներ, դրանցում ցույց է տալիս ՔՀ նորմատիվային դիսկուրսի իրացման մի շարք ուղղություններ: Մասնավորապես, տնտեսության շուկայական դաշտում նորմատիվային մոտեցումները, ըստ հեղինակի, կարող են արտահայտվել մենաշնորհների և կոռուպցիոն մեխանիզմների քննադատությամբ: Սոցիալական մակարդակում նորմատիվային դիսկուր-

[5] Տե՛ս **Alexander J.**, The Discourse of American Civil Society: A New Proposal for Cultural Studies, Theory and Society, Vol. 22, 1993, № 2, էջ 157:

սի առաջխաղացումը կարող է նպաստել, որ ձևավորվեն միջին դասի զարգացմանը միտված արժեքային, մշակութահենք մոտեցումներ: Հանրային քաղաքականության մշակման գործընթացում նորմատիվային մոտեցումները կարող են ինքնավար հանրային դաշտի ձևավորման ուղենիշներ դառնալ:

Ըստ այդմ՝ ՔՀ նորմատիվային տիպարի ազդեցությամբ հասարակական կյանքի տարբեր ոլորտների կազմակերպումը հեղինակը վերլուծում է երկակի (բինար) համակարգերի հարաբերման ցանցի մոդելավորման միջոցով: Այս համատեքստում առաջարկվում են «քաղաքացիական և ապաքաղաքացիական» հակամետ դիսկուրսների ներքո կազմակերպվող բինար կոդերի համակարգերը, որոնք միաժամանակ խմբավորված են ՔՀ երեք բաղադրիչների (շարժառիթներ, ինստիտուտներ, փոխհարաբերություններ) միջև: Այդուհանդերձ, ուսումնասիրելով հիշյալ բաղադրիչների ներքո շարադրված բինար համակարգերը, կարելի է նկատել, որ դրանք աչքի են ընկնում ընդհանրական, հավաքական ձևակերպումներով, ինչը մի կողմից առանձնապես չի շեշտում ազատական-ժողովրդավարական փորձառություններին բնորոշ դիսկուրսային տարրերը, մյուս կողմից բավական ընդհանրական է հայաստանյան ՔՀ դաշտում դրսևորվող խնդիրներին և նորմատիվային բացերին հասցեագրվելու առումով:

Հետևապես հարկ ենք համարում Ջ. Ալեքսանդրի առաջարկած՝ ՔՀ երկակի դիսկուրսների եռաչափ մոդելը տեղային համատեքստին ավելի համարժեք դարձնելու նպատակով համալրել չորրորդ չափմամբ, ինչը ենթադրում է շարժառիթների, ինստիտուտների, փոխհարաբերությունների եռյակին սկզբունքահենք և արժեքահենք երկակի կոդերի ավելացում, որը հնարավորություն կտա առավել լայն և խորքային մշակելու ՔՀ դիսկուրսում դրսևորվող հաղորդակցությունները՝ միաժամանակ ընդլայնելով ՔՀ նորմատիվային չափումները:

Առաջարկված սկզբունքներն ու արժեքները ՔՀ ժողովրդավարական, ազատական դիսկուրսներին հատուկ տարրեր են, ինչպես նաև ներգրավել ենք ՔՀ փորձառությունների նորմատիվացման ընդհանուր և մարտավարական սկզբունքներ (*ցանցային մարտավարություն – կետային գործողություններ*), որոնք թույլ կտան վեր հանել ՔՀ արդի դիսկուրսի մեթոդաբանական ասպեկտները: Ստորև ներկայացնենք արժեքահենք և սկզբունքահենք քննախոսական տարրերի հավաքակազմերը *(տե՛ս գծապատկերը),* այնուհետև ցույց կտանք, թե ինչպես են դրանք տեղակայվում ՔՀ երկակի դիսկուրսների ընդհանուր համակարգում *(տե՛ս աղյուսակը):*

Արժեքակենտրոն զույգեր

- բազմակարծություն (pluralism) – միակարծություն
- լայնախոհություն – հատվածամտություն
- հանդուրժողականություն – խտրականություն
- համերաշխություն – պառակտչություն
- գաղափարակենտրոնություն – պատեհապաշտություն

Սկզբունքահենք զույգեր

- ինքնօգնություն – հովանավորչություն
- ռեֆլեքսիա – անտարբերություն
- ինքնասահմանափակում (self limitation) – բռնություն
- ընկերային միություններ – անջատողականություն
- տեղեկացվածություն – չիմացություն
- մասնակցություն – աբսենտիզմ
- ստեղծագործականություն – դոգմատիզմ
- նորարարականություն – ռեակցիոնիզմ
- հաղորդունակություն – մեկուսացում
- ցանցային մարտավարություն – կետային գործողություններ
- սկբունքորեն շաղկապված քայլեր – պատրվակային մոտեցումներ
- կամավորականություն – թելադրող վարչարարություն

Այժմ տեղայնացնենք առաջարկված հաղորդակցային զույգերը ընդհանուր նորմատիվային մոդելում որպես ՔՀ երկակի դիսկուրսի չորրորդ (սկզբունքներ և արժեքներ) չափում*(տե՛ս աղյուսակը)*:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ հայաստանյան ՔՀ դիսկուրսի քաղաքականակենտրոնությունը հեղափոխական փոխակերպումների պայմաններում ճգնաժամային որոշ նախադեպեր է ստեղծում ՔՀ կազմակերպման գործընթացում, ինչը թույլ է տալիս ստեղծված իրավիճակը նկարագրել ՔՀ անցումային իրականությամբ: Նշյալ ճգնաժամային դրսևորումները կանխելու և ՔՀ ինստիտուտների հետագա կենսունակությունը ապահովելու համար կարևորվել է ՔՀ դիսկուրսի բազմազանեցումը, ինչը ենթադրում է ՔՀ ծանրության կենտրոնի բաշխում հասարակական կյանքի տարբեր ոլորտների միջև, այլ կերպ ասած՝ ՔՀ դիսկուրսային ծածկույթի տարածում առավել լայն համատեքստով:

ՔՀ երկակի դիսկուրսը

	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ	ՀԱԿԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ	
ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐ	+ակտիվություն +ինքնավարություն +ռացիոնալություն +տրամաբանվածություն +զսպվածություն +ինքնատիրապետում +ճշմարտահավանություն +ողջամտություն	-պասիվություն -կախյալություն -իռացիոնալություն -խուճապայնություն -գրգռվածություն -կրքերը կառավարելու անընդունակություն -իրականության աղճատում -հերյուրանք	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿԱԿԻ ԴԻՍԿՈՒՐՍ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	+բացություն +վստահություն +քննադատություն +հարգանք +այլասիրություն +ուղղամտություն +ազնվություն +բաց քննարկումներ +ընկերասիրություն	-գաղտնիություն - կասկածամտություն - անզիջականություն -անձնական շահի գերապատվություն -ագահություն -հաշվենկատություն -սուտ -ծածկամտություն -անտագոնիզմ	
ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ	+կառավարում կանոններով +օրենք +հավասարություն +ներգրավում +անկանխակալություն +պայմանագիր +խմբեր (groups) +հաստատություն	-ամենաթողություն -իշխանություն -աստիճանակարգում - սահմանափակում - սուբյեկտիվություն - չեզոք կապեր -խմբակցություններ (fractions) - անձ	
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐ	+բազմակարծություն +գաղափարակենտրոնություն +լայնախոհություն +համերաշխություն +հանդուրժողականություն +ինքնասահմանափակում +ինքնօզնություն + սկբունքորեն շաղկապված քայլեր +միութենականություն +տեղեկացվածություն +ռեֆլեքսիա +հաղորդունակություն +ցանցայնություն +մասնակցություն +ստեղծագործականություն +նորարարականություն +կամավորականություն	-միակարծություն -պատեհապաշտություն -հատվածամտություն -պառակտչություն -խտրականություն -բռնություն -հովանավորչություն -պատրվակային մոտեցումներ -անջատողականություն -չիմացություն -անտարբերություն -մեկուսացում -կետայնություն - աբսենտիզմ - դոգմատիզմ -ռեակցիոնիզմ -թելադրական վարչարարություն	

Այս առաջադրանքի լուծման համար Ջ. Ալեքսանդրի քաղաքացիական և հակաքաղաքացիական հաղորդակցային համակարգերի ներքո դասակարգվող երկբևեռ դիսկուրսային տարրերի եռաչափ մոդելը (շարժառիթներ, փոխհարաբերություններ, ինստիտուտներ) համալրվել է չորրորդ (արժեքակենտրոն և սկզբունքահենք) չափումով:

Առաջարկված չորրորդ երկվությունների համակարգը միտված է առավել նպատակային դարձնել Ջ. Ալեքսանդրի ընդհանրական նորմատիվիզմը՝ ազատական - ժողովրդավարական դիսկուրսին բնորոշ նոր տարրերի ներդրման միջոցով:

Այսպիսով, սույն մոդելը թույլ կտա ՔՀ կառուցվածքային, գործառական, դիսկուրսային փորձառությունները կազմակերպել և վերլուծել ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված նորմատիվ տիպարի շրջանակներում:

Բանալի բառեր - *քաղաքացիական հասարակություն, նորմատիվային դիսկուրս, ազատական ժողովրդավարություն, դիսկուրսի հանգուցային կետ, երկակի կոդեր, արտոնյալ նշան*

ГАГИК ТУМАНЯН – ***Методологический аспект развития нормативного дискурса в армянском гражданском обществе.*** – После «бархатной революции» в Армении наблюдаются интересные сдвиги в сфере гражданского общества. В частности, обсуждается переселение его акторов в новые политические образования. Это заставляет думать о такой проблеме, как реорганизация в стране гражданского общества. С этой точки зрения становится фундаментально важной выработка направляющей нормативной модели. В статье предлагается реализовать её на основе ключевых элементов либерально-демократического дискурса.

Ключевые слова: *гражданское общество, либеральная демократия, нормативный дискурс, координационный центр дискурса, бинарные коды, привилегированный знак*

GAGIK TUMANYAN – ***The Methodological Aspect of the Normative Discourse Development of Armenian Civil Society.*** – After the “Velvet Revolution”, notable shifts are observed in the field of Armenian civil society. In particular, the processes of the relocation of civil society actors to the newly formed political structures are widely discussed. This makes us think about the problem of the reorganization of the Armenian civil society. From this point of view, the processing of the guide normative model is endowed with fundamental importance, which the article proposes to implement based on the key elements of liberal democratic discourse.

Key words: *civil society, normative discourse, liberal democracy, nodal point of discourse, binary codes, privileged sign*

Ներկայացվել է՝ 17.10.2019
Գրախոսվել է՝ 04.11.2019
Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019